

ԲԱՇԽՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԽՍՀ ԳՅՈՒՂՈՒՄ
1945-1965թթ.

Յուրաքանչյուր երկրի տնտեսության նվաճումները վերջին հաշվով բնորոշվում են բնակչության կենսամակարդակով, նրա նյութական բարեկեցությանը: Այն ապահովելու հիմնական պայմանը բաշխման հարաբերությունների կատարելագործումն էր ընդհանրապես, և աշխատանքի վարձատրության ձևերի զարգացումը՝ մասնավորապես:

Քննարկվող ժամանակաշրջանում ՀԽՍՀ գյուղատնտեսության բնագավառում խորիտնտեսությունների բանվոր-ծառայողները վարձատրվում էին պետության կողմից սահմանված և երաշխավորված դրամական աշխատավարձով: Մինչդեռ կոլտնտեսություններում բնամթերային և դրամական եկամուտները բաշխվում էին ըստ աշխօրերի: Վարձատրության չափերը, հակասելով աշխատանքի կազմակերպման և վարձատրման ընդհանուր սկզբունքներին, պայմանավորված էին կատարված աշխատանքի ոչ թե որակական, այլ քանակական ցուցանիշներով: Աշխատավարձի մեծ տարբերություններ գոյություն ունեին նույնիսկ հարևան կոլտնտեսություններում միևնույն աշխատանքը կատարող կոլտնտեսականների աշխատանքի վարձատրության չափերում: Հետևաբար, ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1948թ. ապրիլի 19-ի «Կոլտնտեսություններում գյուղատնտեսական աշխատանքը կազմակերպելու և վարձատրությունը կարգավորելու միջոցառումների մասին» որոշման համաձայն՝ իրականացվեց աշխատանքի գործավարձային համակարգի կարգավորում և ըստ բրիգադների ու օղակների եկամուտների հաշվառում¹: Սակայն, պայմանավորված գյուղատնտեսական արտադրության զարգացման ցածր մակարդակով, այն սպասված արդյունքը չապահովեց: Եթե 1940թ. յուրաքանչյուր կոլտնտեսականի միջին վաստակը (դրամական արտահայտությամբ) կազմում էր 1.98 ռուբլի, 1945թ.՝ 2.79 ռուբլի², ապա 1952թ.՝ նվազեց մինչև 2.49 ռուբլի³:

Կոլտնտեսություններում աշխատանքի վարձատրության հիմնական թերությունն այն էր, որ կոլտնտեսականները տարվա ընթացքում աշխօրի

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) ֆ. 1, ց. 28, գ. 213, թ. 94:

² ՀԱԱ ֆ. 1, ց. 26, գ. 43, թ. 16:

³ ՀԱԱ ֆ. 1, ց. 33, գ. 72, թ. 43-44:

դիմաց չէին վարձատրվում, բնամթերային և դրամական մուտքերի բաշխումը կատարվում էր միայն տարվա վերջին, ընդ որում՝ 1952թ. ավելի քան 200 կոլտնտեսություններում աշխօրերի դիմաց ընդհանրապես դրամ չէր հատկացվել⁴:

ԽՍՀՄ ԿԿ 1953թ. սեպտեմբերյան պլենումից հետո կիրառվեցին աշխատանքի նյութական խթանման ու վարձատրության մոր, առաջադիմական եղանակներ: Կարևոր նշանակություն ունեցավ ԽՍՀՄ ԿԿ և ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1956թ. մարտի 6-ի «Կոլտնտեսականների ամենամսյա ավանսավորման և կոլտնտեսություններում լրացուցիչ վարձատրության մասին» որոշումը, համաձայն որի՝ նախատեսվում էր ներդնել կոլտնտեսականների ամենամսյա և եռամսյա ավանսավորման համակարգը: Այդ նպատակով կոլտնտեսություններում պետք է ստեղծվեին բնամթերային և դրամական ֆոնդեր⁵: Սակայն շատ կոլտնտեսություններում ամենամսյա ավանսավորման անցնելու գործում կային լուրջ դժվարություններ: Կոլտնտեսությունների զգալի մասում այդ նպատակի համար անհրաժեշտ միջոցների բացակայության հետևանքով դրամական և բնամթերային ֆոնդեր չստեղծվեցին: Բավական է նշել, որ 1956թ. հունվարի 1-ի դրությամբ 872 կոլտնտեսություններից միայն 217-ը աշխօրի դիմաց մինչև 1 ռուբլի դրամ բաշխեց⁶:

Տարվա ընթացքում կոլտնտեսականներին ավանսավորելու գործում տեղ գտած թերությունները հիմնականում հետևանք էին այն բանի, որ մի շարք կոլտնտեսությունների ղեկավարներ ամենամսյա ավանսավորումը՝ որպես աշխատանքի հիմնական վարձատրության բարելավման և աշխատողների նյութական շահագրգռվածության բարձրացման գործոն, անտեսում էին: Բազմաթիվ կոլտնտեսություններում հարկ եղած ուշադրություն չէր դարձվում կոլտնտեսականների ավանսավորման և վարձատրության փոխանցիկ ֆոնդերի առանձնացման և ամենամսյա լրացման վրա: 1964թ. կոլտնտեսությունների մոտ 40%-ը այդ նպատակի համար միջոցներ չէր առանձնացրել: Դա հանգեցրել էր նրան, որ կոլտնտեսականներին ամենամսյա վարձատրող կոլտնտեսու-

⁴ Խաչատրյան Ի., ՍՍՀՄ պայքարը գյուղատնտեսության զարգացման համար, Երևան, 1980, էջ 55:

⁵ Տիտանյան Ա., Հարությունյան Ա., Դրվագներ Հայաստանի գյուղատնտեսության զարգացման պատմությունից, Երևան, 1966, էջ 119:

⁶ Օհանջանյան Բ., Հայաստանի բանվոր դասակարգեր և գյուղացիության դաշինքի պատմությունից Երևան, 1970, էջ 123:

թյունների թիվը դանդաղ էր աճում. եթե 1960թ. այն կազմում էր կոլտնտեսությունների 1.6%-ը, 1963թ.⁷ 3.3, ապա 1965թ. կազմեց ընդամենը 4.2%-ը⁷:

Կոլտնտեսականներին ամենամսյա ավանսավորում չհատկացնելը արգելք էր հանդիսանում ինչպես գյուղատնտեսությունից նրանց հոսունության կանխման, այնպես էլ աշխատանքի երաշխավորված դրամական վարձատրության արմատավորման գործի կազմակերպմանը:

ԽՍՀՄ ԿԿ և ԽՍՀՄ կառավարության 1956թ. մարտի 6-ի որոշմամբ նախատեսվեց կարգավորել նաև լրացուցիչ վարձատրության համակարգը: Սակայն հետագայում ոչ բոլոր տնտեսություններում կիրառվեց արտադրության վերջնական արդյունքի նկատմամբ աշխատողների նյութական շահագրգռվածության բարձրացման այդ գործարար միջոցը: Շատ հաճախ կոլտնտեսությունների ղեկավարները գերադասում էին որոշ ծյուղերի աշխատողների բարեխիղճ աշխատանքի շնորհիվ տնտեսության արտապլանային արտադրանքի դիմաց ստացված լրացուցիչ եկամուտն ամբողջովին մտցնել արտելի հիմնական վարձատրության ֆոնդի մեջ և համահավասարության սկզբունքով ըստ աշխօրերի բաշխել տնտեսության բոլոր անդամներին: Դա, բացասաբար անդրադառնալով բարեխիղճ աշխատողների նյութական շահագրգռվածության վրա, հակասում էր բաշխման գործող սկզբունքներին:

Որպես ընդհանուր թերություն պետք է նշել, որ լրացուցիչ վարձատրություն տրվում էր միայն արտապլանային արտադրանք ավելացնելու համար. ոչ մի կոլտնտեսությունում լրացուցիչ վարձատրություն չէր հատկացվում գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցման, արտադրանքի որակի բարձրացման, ինչպես նաև արտադրության ինտենսիվ վարման ցուցանիշների համար⁸:

Կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման համար կարևոր նշանակություն ուներ հիմնական ու լրացուցիչ վարձատրության այնպիսի համակարգերի կիրառումը, որը կիսաներ նաև գյուղատնտեսության զարգացումը: Այնինչ աշխատանքի վարձատրության գործող կարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն դեռևս ոչ բոլոր դեպքերում էր կապակցված արտադրության որակական ցուցանիշների հետ: Կոլտնտեսությունների գերակշիռ մասում արտադրության տարբեր ծյուղերում շարունակում էին գործել աշխատանքի վարձատրության գծով և արտադրության վերջնական

⁷ Հայաստանի գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման հարցերը, Երևան 1966, էջ 287:

⁸ ՀԱՍ ֆ. 1, ց. 41, գ. 89, թ. 51-53:

արդյունքի հետ չկապված տարբեր կարգեր: Ամզամ վարչակառավարչական աշխատողները վարձատրվում էին տարբեր սկզբունքներով: Մի շարք կոլտնտեսություններում, անկախ արտադրանքի ցուցանիշներից, այն կախման մեջ էր դրված տնտեսության մեջ օգտագործվող հողային տարածություններից և անասնազխաքանակից, իսկ որոշ խումբ կոլտնտեսություններում այդ աշխատողների վարձատրությունը կախված էր ըստ տեսակի արտադրվող մթերքների քանակից:

Փաստորեն խախտվել էր տարբեր մասնագիտություններով զբաղված կոլտնտեսականների աշխատանքի և վարձատրության համամասնությանը: ԽՍՀՄ ԿԿ և ԽՍՀՄ նախարարների խորհուրդը 1963թ. նոյեմբերի 19-ի որոշմամբ սահմանեց կիրառել տնտեսություններում ստացված համախառն արտադրանքի արժեքից կախված աշխատանքի վարձատրություն⁹: Սակայն այն նույնպես սպասված արդյունքը չապահովեց: Կուտակման և ըստ աշխատանքի բաշխման ֆոնդերի միջև ճիշտ հարաբերակցություն չսահմանվեց: Հարկ է նշել, որ կոլտնտեսային արտադրության մեջ անմիջական ներգրավվածները 1965թ. ստանում էին վարչա-կառավարչական համակարգի աշխատողների վաստակի միայն 64.9%-ը¹⁰:

Ի դեպ, խորհունտեսություններում 1957թ. հունվարի 1-ից կիրառվող աշխատանքի վարձատրության նոր կարգի համաձայն՝ վարչակառավարչական անձնակազմի և բանվորների վարձատրությունը բավական հաջող ձևով կապակցվեց արտադրության վերջնական արդյունքի հետ: Բարձրացվեցին բանվոր-ծառայողների ցածր վարձատրվող և չհարկվող նվազագույն աշխատավարձի չափերը¹¹: Այն զգալիորեն նպաստեց ընդլայնված վերարտադրության ապահովման գործում աշխատավորների և խորհունտեսությունների շահերի ճիշտ զուգակցմանը:

Այսպիսով՝ եթե 1953-1958թթ. գյուղատնտեսական արտադրության զարգացման շնորհիվ կոլտնտեսականների աշխատանքի վարձատրման ֆոնդը աճել էր շուրջ 30.8 մլն ռուբլով (57%-ով)¹², կամ յուրաքանչյուր կոլտնտեսականի ամսական միջին վաստակը 59.4 ռուբլուց բարձրացել էր մինչև 73.3 ռուբլի, ապա հետագա տարիներին գյուղատնտեսության զարգացման ցածր ցուցանիշների, կոլտնտեսությունների զգալի մասում գիտականորեն չհիմնավորված արտադրական նորմաների, աշխատանքի տարիֆային կարգի, տար-

⁹ ՀԱՍ ֆ. 1, ց. 44, գ. 45, ք. 177:

¹⁰ Народное хозяйство Арм. ССР в 1965г., (стат. сборник), Ереван, 1966, стр. 104.

¹¹ ՍՍՀՄ Տեղեկագիրք, Երևան 1984, էջ 365:

¹² Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, Երևան 1961, էջ 133, 139:

բեր ճյուղերում միմյանց հետ համաձայնեցված վարձատրության կարգերի բացակայության հետևանքով, ինչպես նաև աշխատանքի վերջնական արդյունքի նկատմամբ աշխատողների նյութական շահագրգռվածության բացակայության հետևանքով խաթարվեց կատարված աշխատանքի և վարձատրության համամասնությունը: Դա բացասաբար անդրադարձավ կոլտնտեսականների ամենամսյա աշխատավարձի վրա: Արդեն 1965թ. այն նվազեց մինչև 69.4 ռուբլու (վարձատրությունը հաշված է դրամական և բնամթերային տարրերով՝ պետական գնման գներով, արձակուրդային վճարներով և պարգևներով)¹³: Նույն թվականին խորհունտեսությունների բանվորների ամենամսյա աշխատավարձը կազմեց 58 ռուբլի (լրացուցիչ աշխատավարձով հանդերձ, առանց հաշվի առնելու սոցապահովագրությունը)¹⁴: Այն կազմում էր կոլտնտեսականների աշխատավարձի շուրջ 84%-ը: Նման պայմաններում գյուղական բնակչության համար առանձնահատուկ կարևորվում էր եկամուտների ստացման այլ աղբյուրների՝ ընդհանրապես և անձնական օժանդակ տնտեսությունների դերը մասնավորապես:

Անձնական օժանդակ տնտեսությունը, լինելով սոցիալիզմին հատուկ օբյեկտիվ տնտեսական կատեգորիա, գյուղում առավել տարածված սոցիալ-տնտեսական կառույցներից մեկն էր, որը ոչ միայն նշանակալից դեր էր խաղում գյուղական բնակչության եկամուտների ստացման բնագավառում, այլ նաև երկրի պարենի ընդհանուր պաշարի գոյացման աղբյուրներում:

Այն որպես ինքնուրույն տնտեսական կառույց հանդես էր եկել դեռևս կոլեկտիվացման ժամանակ: Նկատի առնելով, որ ստեղծվող հանրային տնտեսությունները գյուղում արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակի պայմաններում չէին կարող լիովին բավարարել գյուղական բնակչության անձնական բոլոր պահանջմունքները, թույլ տրվեց նրանց ունենալ ապրուստի լրացուցիչ աղբյուր՝ անձնական օժանդակ տնտեսություն: Վերջինիս գոյության իրավունքն ամրապնդվեց ԽՍՀՄ 1936թ. սահմանադրության 7-րդ հոդվածով: Սակայն պետք է նշել, որ կոլեկտիվացումից հետո գյուղացիների անձնական օժանդակ տնտեսությունների հարցում տարբեր ժամանակներում ցուցաբերվեցին տարբեր մոտեցումներ: Նույնիսկ փորձեր կատարվեցին աստիճանական սահմանափակման ճանապարհով վերացնել այդ տնտեսությունները: Տնտեսապես ու քաղաքականապես չհիմնավորված այդ սահմանափակումները բխում էին օժանդակ տնտեսության բնույթի, նրա կոչման ու խնդիրների ոչ

¹³ Народное хозяйство Арм. ССР, (юб. стат. сборник к 60-летию образования СССР), Ереван, 1982, стр. 128.

¹⁴ Народное хозяйство Арм. ССР, стр. 120:

ճիշտ ըմբռնումից: Անձնական օժանդակ տնտեսությունների գոյությունը իշխանությունների շրջանում առաջ էր բերում այն տազնապալի զգացումն ու մտավախությունը, թե վերջինիս զարգացումը գյուղացիության ուշադրությունը կշեղեր հանրային արտադրությունից: Սակայն փորձը ցույց տվեց, որ օժանդակ տնտեսությունների անհիմն սահմանափակումները ոչ միայն վնասում էին գյուղացիության ապրուստի պայմաններին, այլ նաև բացասաբար էին անդրադառնում նրանց մասնակցությանը հանրային արտադրությանը

Գյուղական բնակչության անձնական և հասարակական շահերի ճիշտ զուգորդման գործում կարևոր նշանակություն ունեցավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1953թ. օգոստոսին ընդունած գյուղատնտեսական հարկի վերաբերյալ նոր օրենքը, որով արմատապես փոխվեց հարկման համակարգը: Եթե մինչ այդ հաշվի էր առնվում օժանդակ տնտեսությունում մշակվող յուրաքանչյուր մշակաբույսից ստացված եկամտի չափը (որքան այն բարձր էր, այնքան շատ հարկ էր նշանակվում), ապա նոր օրենքով հարկման հիմքում դրվեց հեկտարային սկզբունքը: Ինչպես նաև՝ այդ օրենքով գյուղացիները ազատվեցին նախորդ տարիներին կուտակված պարտքերից, իսկ անասնազուրկ տնտեսությունները ամասուն ձեռք բերելու հնարավորություն ստացան¹⁵:

Անձնական օժանդակ տնտեսություններից գյուղացիների եկամուտների ավելացման և ընդհանրապես այդ տնտեսությունների զարգացման գործին խթանեց նաև ԽՄԿԿ ԿԿ և ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1957թ. հունիսի 4-ի համառեղ որոշումը, որով կոլտնտեսականների, բանվոր-ծառայողների տնամերձ տնտեսություններից պետությանը մթերքների պարտադիր հանձնումները 1958թ. հունվարից վերացվում էին¹⁶:

1962-1964թթ. չհիմնավորված միջոցառումներով կրկին սահմանափակվեցին կոլտնտեսականների անձնական օժանդակ տնտեսությունները, իսկ խորհտնտեսությունների բանվոր-ծառայողները զրեթե ամբողջովին զրկվեցին դրանցից: Այդ միջոցառումների հետևանքով զգալիորեն կրճատվեցին գյուղացիների կողմից վաճառքի հանվող գյուղատնտեսական մթերքների ծավալները: Դա հատկապես ակնառու էր կոլտնտեսային շուկայում շրջանառության ֆիզիկական ծավալի 24 տոկոս կրճատումից: Այս ամենի հետևանքով 1964թ.

¹⁵ Գեղամյան Գ., Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում, Երևան, 1968, էջ 98:

¹⁶ Օհանջանյան Բ., նշվ. աշխ., էջ 96:

1958թ. համեմատությամբ գյուղատնտեսական մթերքների գները բարձրացան 27%-ով¹⁷:

ԽՍՀՄ 1964թ. հոկտեմբերյան, նոյեմբերյան և 1965թ. մարտյան պլենումները դատապարտեցին այդ սխալ քաղաքականությունը: Վերացվեցին անձնական օժանդակ տնտեսությունների հանդեպ չհիմնավորված այդ սահմանափակումները:

Եթե հանրային աշխատանքը անմիջականորեն հասարակական բնույթ էր կրում, ապա խնդրո առարկա տնտեսություններում այն ուղղակի իմաստով անմիջական հասարակական բնույթ չուներ: Հիանալանցված աշխատանքի այս բնագավառը էապես նպաստում էր նրանցում ընդգրկվածների նյութական բարեկեցության բարձրացմանը: Դա պայմանավորված էր նրանով, որ անձնական օժանդակ տնտեսություններում գործադրվող աշխատանքի համարյա ամբողջ արդյունքը դառնում էր արտադրողի և նրա ընտանիքի անձնական սեփականությունը: Միաժամանակ, անձնական օժանդակ տնտեսությունների գործունեությունը պայմանավորված էր հանրային տնտեսության համեմատ աշխատանքային ծախսումների դիմաց ստացված ավելի բարձր եկամտով: Բավական է նշել, որ ՀԽՍՀ գյուղական յուրաքանչյուր ընտանիքի ստացած համախառն եկամտի մեջ անձնական օժանդակ տնտեսության բաժինը 1953թ. կազմում էր 36.5, 1958թ.՝ 32.4, իսկ 1965թ.՝ 33.6%, ընդ որում՝ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերում՝ ավելի բարձր՝ շուրջ 60%¹⁸:

Եթե մինչև 1950-ական թթ. վերջերը այն հանդիսանում էր գյուղական ընտանիքների պարենի անձնական պահանջմունքների բավարարման հիմնական աղբյուրներից մեկը, ապա հետագա տարիներին սկսեց նաև զգալի դեր խաղալ բարեկեցության բարելավման գործում, ինչպես նաև իրականացնել կուտակման գործառույթ: Այն արտահայտվում էր խնայողամարկղներում գյուղական բնակչության ներդրած ավանդների աճով: Օրինակ՝ եթե 1940թ. համեմատությամբ 1950թ. գյուղական վայրերում ավանդատուների թիվը 34 հազարից նվազել էր մինչև 19 հազարի, ապա 1959թ. բարձրացավ մինչև 65 հազար, իսկ 1965թ.՝ 71.2 հազար: Ընդ որում՝ եթե յուրաքանչյուր ավանդի միջին չափը կազմում էր 46.7 ռուբլի, 1959թ.՝ 150.1 ռուբլի, ապա 1965թ. կազմեց 155.6 ռուբլի¹⁹: Ինչպես եզրակացնում է Վ. Հակոբյանը, գյուղական

¹⁷ Ամիրյան Ս., Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքն արդի տեսքում, Երևան, 1967, էջ 219:

¹⁸ Խոջաբեկյան Վ., Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Երևան, 1976, էջ 248:

¹⁹ Советская Армения за 40 лет (стат. сборник), Ереван, 1960, стр. 36; Народное хозяйство Арм. ССР, стр. 212.

բնակչության ավանդների ծավալի աճը հետևանք էր ոչ միայն գյուղական բնակչի նյութական պայմանների բարելավմամբ, այլև օժանդակ տնտեսությունից ստացված եկամտի միանվագ տնտեսման և ընդհանրապես գյուղաբնակի հոգեբանության մեջ կուտակման հակումի ուժեղ դրսևորման գործոններով²⁰:

Մեր կարծիքով՝ հանրային արտադրությանը զուգահեռ անձնական օժանդակ տնտեսությունները նշանակալից դեր էին խաղում գյուղական բնակչության պահանջմունքների բավարարման, հետևաբար նաև՝ կենսամակարդակի բարձրացման գործում: Այս բոլորով հանդերձ, անձնական օժանդակ տնտեսությունը միաժամանակ մնում էր որպես հասարակության մեջ սոցիալական տարբերությունների պահպանման գործոն: Հաճախ, պարփակված լինելով ընտանեկան նեղ շրջանի հետաքրքրություններում, այն նպաստում էր անհատական սոցիալ-հոգեբանական բնույթի միտումների պահպանմանը, հողատիրոջն այս կամ այն չափով կտրում էր հանրային աշխատանքից և կողմնորոշում դեպի սեփականատիրական հարաբերություններ:

Բաշխման բնագավառում որոշակի դեր էին խաղում նաև սպառման հասարակական ֆոնդերը: Եթե մինչև 1950-ական թվականների վերջերը կոլտնտեսային գյուղացիության սոցիալական ապահովման հարցերը լուծվում էին տվյալ կոլտնտեսության կողմից՝ իր հնարավորություններին համապատասխան (ուստի սպառման հասարակական ֆոնդերից օգտվելու տեսանկյունից կոլտնտեսային գյուղացիությունը ետ էր մնում մեր հասարակության մյուս բոլոր խմբերից), ապա կոլտնտեսականների կյանքում կարևոր նշանակություն ունեցավ նրանց ծերության կենսաթոշակ նշանակելու մասին ԽՍՀՄ կառավարության 1956թ. դեկտեմբերի 6-ի որոշումը: Սակայն մեծահասակներին կենսաթոշակ նշանակվեցին միայն ՀԽՍՀ 477 կոլտնտեսություններում²¹:

Կոլտնտեսությունները խորհտնտեսությունների վերակազմավորելու կապակցությամբ ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1961թ. օգոստոսի 1-ի որոշմամբ կենսաթոշակ սահմանվեց նաև զառամյալներին, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին, նախկին այն կոլտնտեսականներին, որոնք պետության կողմից թոշակ չէին ստանում և վարձու աշխատանք չէին կատարում: Կոլտնտեսականներին կենսաթոշակ և նպաստներ նշանակելու կարգը կատարելագործելու նպատակով ԽՍՀՄ ԿԿ 23-րդ համագումարի որոշմամբ նախատեսվեց 1965թ. հունվարի 1-ից կիրառել կոլտնտեսականների կենսաթոշակային ապահովվածությունը, բարձրացվեցին դրանց նվազագույն չափե-

²⁰ Տե՛ս Հակոբյան Վ., Սոցիալական փոփոխությունները Հայկական ՍՍՀ գյուղում զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Երևան, 1985, էջ 120:

²¹ Հաշվետու զեկուցում ՀԿԿ 20-րդ համագումարին, Երևան, 1958, էջ 64:

րը, իսկ ծերության կենսաթոշակ ստանալու համար տարիքի և թոշակավորման կարգի տեսակետից կոլտնտեսականների և բանվոր-ծառայողների իրավունքները հավասարվեցին: Լրացուցիչ արտոնություններ տրվեցին նաև Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին և զոհված մարտիկների ընտանիքներին: Միաժամանակ սահմանվեցին հղիության և ծննդաբերության նպաստներ կոլտնտեսական կանանց համար²²:

Այսպիսով, 1960-ական թվականներին կոլտնտեսություններում սպառման հասարակական ֆոնդերը և դրանցով կոլտնտեսականներին ապահովման պայմանները մի շարք կողմերով մերձեցան պետական ձեռնարկությունների համապատասխան ձևերին և դրանց բաշխման պայմաններին: Այսպես, եթե 1965թ. գյուղատնտեսության բնագավառի բանվոր-ծառայողների սպառման հասարակական ֆոնդից վճարումների և արտոնությունների ամսական ծավալը կազմում էր 32.7 ռուբլի, ապա կոլտնտեսականների մոտ՝ 27.4 ռուբլի²³:

Եզրափակելով շարադրանքը կարելի է նշել, որ գյուղատնտեսության բնագավառում բաշխման անկատար համակարգը էապես խոչընդոտում էր ինչպես գյուղատնտեսության բնականոն զարգացումը, այնպես էլ բնակչության նյութական կացության բարելավումը: Գյուղական բնակչության արտահոսքի իրողության երևան եկող դժգոհությունները հստակորեն վկայում են, որ գյուղատնտեսության բնագավառի որոշ առաջընթացը չէր փոխհատուցվում սոցիալական կորուստներով: Դրանք հաճախ ծնում էին անցանկալի այնպիսի երևույթներ, որոնք ժամանակին չկանխվելով հետագայում աղետալի հետևանքներ ունեցան:

²² Խաչատրյան Ի., Կոմունիստական հասարակական հարաբերությունների զարգացումը գյուղում, Երևան, 1967, էջ 18:

²³ Народное хозяйство СССР в 1922-1982 гг., (стат. сборник) Москва, 1982, стр. 423-424.